ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

ԵՄ-Ն ԱՋԱԿՑՈՒՄ Է

Բարձրագույն և մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտներին

ԵՄ հիմնական գործիք՝ «Էրազմուս+»

Նոր բազմաոլորտային բյուջետային աջակցության շրջանակը ևս նախատեսում է մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում մի շարք պայմանների իրականացում՝ առաջնահերթություն տալով աշխատանքի վրա հիմնված ուսուցման համակարգի զարգացմանը, ինչպես նաև ՄԿՈՒ դասավանդողների վերապատրաստման, ատեստավորման և մասնագիտական առաջխաղացման մեխանիզմների ամրապնդմանը:

Միջնակարգ կրթությանը

ԵՄ ոլորտային աջակցության ծրագիր՝ ընդհանուր 32 մլն եվրո բյուջետային աջակցություն (ԲԱ), որից 2.7 մլն եվրոն որպես տեխնիկական օժանդակություն:

ԲԱ-ն կենտրոնացվել է միջնակարգ կրթության ուղղությամբ՝ նպատակ ունենալով կատարելագործել մատչելի որակյալ կրթությունը, ԲՏՄՄ առարկաները, դպրոցների ենթակառուցվածքը և կառավարումը, մասնագիտական կողմնորոշման ակումբները և կանաչ տնտեսության նախագծերը, ինչպես նաև ուսանողների ուսումնական արդյունքների գնահատման համակարգը:

«Հայաստանում ուսուցիչների համար արհեստական բանականության գործիքների ներդրում» ծրագիրը նպատակ ունի վերապատրաստել ուսուցիչներին զարգացնելով նրանց կարողությունները արհեստական բանականության գործիքների կիրառման ոլորտում:

Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտի երկկողմ ծրագրերին

Ոչ ֆորմալ / արտադպրոցական կրթությանը

Գյումրու Շուկա և Խոհարարական Դպրոց

Բյուջե
€2.500.000

Դրամաշնորհի հիմնական նպատակ
Բարելավել տնտեսական աճը Շիրակի մարզում՝ ապահովելով տեղական շահագրգիռ կողմերի համար որակյալ կրթություն և հմտությունների ձևավորմանն ուղղված ուսուցում:

Իննոհիջևան կենտրոն

Բյուջե
€640.000

ԻննոՀիջևանը Տավուշի մարզի Իջևան քաղաքում ԵՄ աջակցությամբ ստեղծված գործնական կրթության կենտրոն է: Այն երիտասարդներին և սկսնակ ձեռներեցներին հնարավորություն է ընձեռում զարգացնելու գործնական հմտություններ ծրագրավորման, ռոբոտաշինության, եռաչափ (3D) մոդելավորման, էլեկտրոնիկայի և տեխնոլոգիական այլ ոլորտներում՝ միաժամանակ տրամադրելով մենթորական աջակցություն և մասնագիտական ուսուցման հնարավորություններ:

ԹՈՒՄՈ

ԵՄ ներդրում	ԵՄ ներդրում
€12.500.000	**€1.000.000**

ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիր
Հետազոտությունների, կրթության և ստարտափների հանգույց, որը համապատասխանում է համալսարանական ուսանողների և երիտասարդ մասնագետների կարիքներին: Կենտրոնը կիամախմբի գործընկերներին՝ Հայաստանում բարձրագույն կրթության և արդյունաբերության միջև անջրպետը կամրջելու նպատակի շուրջ:

ԹՈՒՄՈ Լաբեր
ԹՈՒՄՈ Լաբերն անվճար կրթական ծրագիր է՝ մշակված երիտասարդ մասնագետների և 18-ից բարձր տարիքի համալսարանական ուսանողների համար:

Կապանի ԹՈՒՄՈ
Կապանի ստեղծարար տեխնոլոգիաների ԹՈՒՄՈ կենտրոնը, որը տեղակայված է քաղաքի վերականգնված պատմական երկաթուղային կայարանի շենքում, երիտասարդներին տրամադրում է տեխնոլոգիաների և դիզայնի ոլորտներում անվճար կրթություն: Ինքնուսուցման, գործնական աշխատարանների և նախագծային լաբորատորիաների միջոցով ուսանողները զարգացնում են հմտություններ 14 ուղղություններով, այդ թվում՝ ծրագրավորման, ռոբոտաշինության, անիմացիայի, խաղերի ստեղծման, եռաչափ (3D) մոդելավորման, գրաֆիկական դիզայնի, ֆիլմարտադրության, երաժշտության և գեներատիվ արհեստական բանականության ոլորտներում: Կենտրոնը հանդիսանում է Սյունիքի հարավային հատվածում ԹՈՒՄՈ-ի կրթական ցանցի հիմնական հանգույցը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ Կենտրոններ

Նախատեսված բյուջե
€10.000.000

ՔՈԱՖ-ի կողմից գործարկվող ՍՄԱՐԹ Կենտրոնները նախատեսված են ապահովելու արտադպրոցական կրթության հնարավորություններ Սյունիքի մարզի 50 գյուղական համայնքների երեխաների և երիտասարդների համար:

Աջակցություն կրթական բարեփոխումներին և հմտություններին Արևելյան գործընկերության տարածաշրջանում (SER)

Բյուջե
€2.500.000

Ծրագրի նպատակ
Կրթական համակարգերի արդյունավետության բարձրացում, հավասար հնարավորությունների ապահովում և արդիականության ամրապնդում, ինչպես նաև կայուն բարեփոխումների խթանում:

Գլխավոր ուղղություններ
• Կրթության արագ ախտորոշում (RED)
Կրթական համակարգերի տվյալահեն վերլուծություն՝ ներառելով անհավասարությունների, ֆինանսավորման և կառավարման հարցերը:
• Կարողությունների զարգացում
Աջակցություն կրթական քաղաքականությունների իրագործմանն ու կառավարման բարեփոխումներին:
• Փորձի փոխանակում
Տարածաշրջանային համագործակցություն Արևելյան գործընկերության երկրների և ԵՄ անդամ պետությունների հետ՝ կրթական բարեփոխումների և համակարգի զարգացման հիմնական ուղղություններով:

Հայաստանում ծրագրի առաջնահերթությունները
• Հայաստանի կրթության արագ ախտորոշումն ավարտված է, և դրա արդյունքները քննարկվել են բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունների ընթացքում:

• Նախագիծը նպաստում է կրթության կառավարման համակարգի վերանայմանը և կարողությունների զարգացման նախաձեռնություններին՝ RED-ի առաջարկությունների հիման վրա: Հայաստանը նաև ներգրավված է տարածաշրջանային փորձի փոխանակման գործընթացներում Արևելյան գործընկերության մյուս երկրների հետ:

ԵՄ-ն երկկողմ և տարածաշրջանային ծրագրերի միջոցով աջակցում է երիտասարդական նախաձեռնություններին

Բյուջե
€2.000.000

ԵՄ ներդրում	**€1.200.000**
KAS ներդրում	**€800.000**

Ծրագրի նպատակ

Ներկայում, ԵՄ-ն աջակցում է «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրի իրականացմանը: Ծրագրի նպատակն է զարգացնել Հայաստանում քաղաքացիական հասարակության կարողությունները՝ երիտասարդներին կրթելու և հզորացնելու, ապագա առաջնորդներ ձևավորելու, ինչպես նաև երկրի սոցիալական, քաղաքական և հասարակական կյանքում վերջիններիս ավելի ակտիվ մասնակցությանը նպաստելու համար:

EU4Youth տարածաշրջանային ծրագրեր

1.Երիտասարդների զբաղվածություն և ձեռներեցություն 2021-2025թթ

Բյուջե
€15.120.000

ԵՄ ներդրում	**€14.400.000**
Իրականացվում է Լիտվայի Ծրագրերի կառավարման կենտրոնական գործակալության (CPMA) առաջնորդությամբ գործող կոնսորցիումի կողմից:	**€720.000**

Ծրագրի նպատակ

Խթանել երիտասարդների, հատկապես խոցելի երիտասարդների ակտիվ մասնակցությունը շահառու երկրների ժողովրդավարական կյանքում և աշխատանքի շուկաներում՝ դրանով իսկ աջակցելով կայուն և խելացի աճին, սոցիալական համերաշխությանը, պատերազմի հետևանքների հաղթահարման նպատակով տնտեսական և հասարակական դիմակայունության բարձրացմանը, ինչպես նաև Արևելյան գործընկերության երկրների հասարակություններում անհավասարությունների նվազեցմանը:

2.Երիտասարդների ներգրավում և հզորացում 2023-2025թթ

Բյուջե
€5.600.000

ԵՄ ներդրում	**€5.000.000**
Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) ներդրում: Իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից:	**€600.000**

Ծրագրի նպատակ

Ծրագրի գործողությունները կօգնեն բարձրացնել երիտասարդական կազմակերպությունների և պետական հաստատությունների կարողությունները՝ համատեղ խթանելու ավելի մասնակցային և կառուցվածքային քաղաքական երկխոսություն:

EU4Youth համակարգում և աջակցություն 2023-2026թթ

Բյուջե
€2.500.000

Իրականացվում է Ernst & Young-ի կողմից

Ծրագրի նպատակ

ԵՄ-ի երիտասարդությանն ուղղված գործողությունների համակարգումն ու քաղաքական աջակցությունն Արևելյան գործընկերության տարածաշրջանում շարունակվում է՝ ուժեղացված իրազեկմամբ, համագործակցություններով և չափելի արդյունքներով:

ԵՄ պատվիրակությունը 2025 թվականի հունվարից նախաձեռնել է Երիտասարդական խորհրդատվական խորհրդի ստեղծում՝ ապահովելու շարունակական և կառուցվածքային մեխանիզմ հայ երիտասարդների համար՝ ԵՄ-ի երիտասարդությանն առնչվող ծրագրերի և նախաձեռնությունների ձևավորմանը և իրագործմանը մասնակցելու նպատակով: Այն ծառայում է որպես կապող օղակ Եվրոպական միության պատվիրակության, Հայաստանի երիտասարդական համայնքի և համապատասխան պետական կառույցների միջև՝ նպաստելով երիտասարդների առավել լայն ներգրավվածությանը, հավասարը հավասարին հաղորդակցության ուղիների ձևավորմանը և երկխոսության մեխանիզմների զարգացմանը: